

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

I Արտիստիկական թատրոն

«Օտարուհին» Դիմա որդու:— «Թագնուած կայծեր» Ս. Թառալեանի:— «Նորա» Իրսէնի:— Պիեսաների ընտրութիւնը և բեմական լեզուն:

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը դեկտեմբերի 11-ին ներկայացրեց Դիմա որդու Օտարուհին (l'Etrangère): Ստիպուած ենք ասել, որ մեր՝ ինչպէս և հաւանականաբար բոլոր հանդիսատեսներին անկեղծ ցանկութիւնն է այդպիսի ներկայացումն այլևս երբէք չը տեսնել հայ բեմի վրայ: Ո՞վ էր ընտրել այդ պիեսան և ինչո՞ւ համար, առաջին հարցի պատասխանը գուցէ կարելի լինի գտնել, բայց երկրորդին պատասխանելը առնուազն չափազանց դժուար է: Այդ երեկոյ դժգոհ էր հասարակութիւնը, դժգոհ էին ինչպէս իմացանք՝ վարչութեան անդամները, դժգոհ էին երևի նաև դերասանները, որովհետև վատ էին խաղում և քիչ էր մնում բեմի վրայ սկսեն յօրանջել:

Եւ այդ բոլորը հասկանալի է. Դիմայի «Օտարուհին» նրա գործերի մէջ ամենաթոյլերից մէկն է: Գործողութիւնը շատ քիչ, բառերը շատ, իսկ գլխաւոր տիպը՝ Օտարուհին իրականութիւնից կտրուած, մի տեսակ առասպելական արկածախնդրէ: Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ մնացած գործողներն էլ առանձին հետաքրքրութիւն զարթեցնել չեն կարողանում և որ առանց աճն էլ ձանձրալի այդ պիեսան վատ էլ խաղացուեց, ապա հասկանալի կը լինի այն ընդհանուր դժգոհութիւնը, որ այդ երեկոյ համակել էր դահլիճը: Դեռ լաւ որ Դիման այդ պիեսայի մէջ դրել է մի անգլիացու տիպ, և աւելի լաւ, որ այդ դերը կատարում էր պ. Արեւեան. շնորհալի դե-

բասանը էլի կարողացաւ մի փոքր մեղմել այդ երեկոյի ընդհանուր հիասթափութիւնը: Այդ ներկայացման մասին աւելին ասել անկարելի է:

*
* *

Դեկտեմբերի 15-ին խաղացուած «Թագնուած կայծերը» պ. Ս. Թառայեանի, կարելի է համարել մի տխուր թիւրիմացութիւն և լուսթեան տալ, բայց ներկայ դէպքում մի այդպիսի լուսթիւն առնուազն դատապարտելի է, երբ հրապարակի վրայ թատրոնական գործը կայ:

Պ. Թառայեանի «Թագնուած կայծերը»-ը քննադատելու ցանկութիւն չ'ունենք. որեւէ գործ մօտիկից ուշադրութեամբ դիտելու համար անհրաժեշտ է ոտքի տակ մի հաստատ յենակէտ ունենալ, տարաբախտաբար այս դրամայում պակասում է անգամ այդ յենակէտը: Եթէ աւելին չ'ասենք, դա մի տղայամիտ գործ է, ուր ամեն ինչ կայ, բացի այն, ինչ անհրաժեշտ է, այսինքն լուրջ միտք, գեղարուեստական ամբողջութիւն, բեղիեֆ իդէա: Հինգ գործողութիւն իրար վրայ բեմում հանդէս էին դրում արտիստիկական թատրոնի բաւական հարուստ ղեկորացիաները և դերասանները, որոնք ակամայ ընկել էին ֆրագերներին վիճակի մէջ, իրար էին յաջորդում դէսից-դէսից հաւաքած բռնիք ու նախադասութիւններ ասելու համար: Արուեստականութիւն տիպերի մէջ, արուեստականութիւն գործողութիւնների մէջ, որոնցից և ոչ մէկը արդիւնք էր խելացի տրամաբանութեան:

Չը կար համարեա մի հատիկ տրագիկական մոմէնտ, որ կարողանար յոյզ առաջ բերել, ծիծաղի պատճառ չը դառնալ: Եւ դա շատ հասկանալի է, քանի որ պ. Թառայեանի զլխաւոր հերոսը մի պատետիկ մոմէնտում իր սիրած կնոջ աչքերի մէջ տեսնում է՝ «Մայր Արաքսի դարաւոր թախիժը»: Ծայրէ ի ծայր նայելուց յետոյ մարդ գալիս է այն տխուր եղրակացութեան, որ հիդրնակը առանց քննելու, առանց սխտեմի գրի է առել այն բոլորը, ինչ լսել է այստեղից-այնտեղից, ինչ երբեքից կարդացել է մի գրքում, ինչ գտել է մի բանաստեղծութեան մէջ, և այս բոլորի արդիւնքը դուրս է եկել մտքերի, գաղափարների մի անտանկի ժխոր, որը տեսնելու համար համբերութեան մեծագոյն չափը անհրաժեշտ է դառնում:

*
* *

Օր. Խիթարեան ի՞նչ բնութիւն ընտրել էր Իբսէնի «Նորա»-ն, որ խաղացուեց ղեկտեմբերի 11-ին: Այս դրաման Իբսէնի խոշոր գործերից մէկն է, որի մէջ հոգեբանական վերլուծութիւնը հասցրած է օրինակելի կատարելութեան և որի հիմնական գաղափարը տրամաբանօրէն ժայթքում է ամբողջութիւնից յանկարծական գեղեցիկ փայլով: Ծայրայեղօրէն ինդիւլիդուալիստ, «հիւսիսի մենաւորը» ինչպէս սիրում են անուանել Իբսէնին, դրել է Նորայի տիպի մէջ անհատական կամքի ամենաբոռն արտայայտութիւնը: «Ի՞նչ ամենից առաջ կին ես և մայր», ասում է ամուսինը Նորային, երբ վերջինս պատրաստւում է նրան թողնել. «Ինձ թւում է, որ ես ամենից առաջ մարդ եմ կամ յամենայն դէպս ես պարտական եմ փորձել մարդ դառնալ», պատասխանում է Նորան: Ահա այս դրամայի հիմնական գաղափարը: Բոլոր մնացած գործողութիւնները, բոլոր տիպերը նրա համար են, որ այս խոշոր գաղափարը՝ որքան կարելի է՝ բնութիւն կերպով աչքի ընկնի: Եւ որովհետեւ գլխաւոր հերոսուհին, զոհը և մարտնչողը Նորան է, բնականապէս նրա խաղից է կախուած լինում այս դրամայի յաջողութիւնը: Տարաբախտաբար օր. Խիթարեանն այդ պահանջին բաւականութիւն տալուց հետո մնաց: Օրիորդի խաղը կարելի է համարել տեղ-տեղ մտածուած, յաճախ անհարթ, մեծաւ մասամբ անյաջող: Նա ժեստեր ունի, որոնք տրագիկական են, մի ճիշդ, որ կարող է յոյզ առաջ բերել, լռութեան մոմենտներ, որոնք վատ չեն, բայց նա երբէք չի կարողանում մարդու յափշտակել, մոռացութեան մէջ ձգել, որ լաւ խաղի իսկական նշանն է: Նա հրապարակ եկաւ վերջին մի քանի պիեսներում պատասխանատու գերերի մէջ և ամեն տեղ էլ նոյն թերութիւնները: Եթէ երկրորդական պատճառները մի կողմ թողնենք, հէնց այն հանգամանքը, որ օրիորդը հայերէն արտասանում է ցաւաղին դժուարութեամբ, որ նա կտրտւում է նախադասութիւններն ու բառերը մի արտասուելի ճիգով, որ նրա շրթունքները երբեմն ասես կարկամւում են և պինդ պահում խօսքերը, այսքանը բոլորովին բաւական է նրա խաղը սպանելու համար:

Անկարելի է ուշադրութեան չառնել նաեւ պ. Պետրոսեանի (Բորեւոտ Գեղմեր) վերին աստիճանի չոր, անյոյզ, համարեաւ ակամայ խաղը, որ էլ աւելի փչացրեց ընդհանուր տպաւորութիւնը:

*
* * *

Ընդհանրապէս պէտք է նկատել, որ ղեկտեմբեր ամիսը

Թիֆլիսի հայկական ներկայացուցիչների համար ձախորդ ամիս եղաւ:

Ինչի՞ն պէտք է վերագրել այս բաւական անհաճոյ երեւոյթը. անշուշտ ոչ մի հատիկ հանգամանքի և ոչ մի հատիկ անձի, այլ հանգամանքների և անձերի: Պատասխանատուութիւններ սահմանելու ոչ կարողութիւն և ոչ ցանկութիւն ունենք, բայց չենք կարող մատնացոյց չ'անել այս սխտեմատիկ անհոգութիւնը, որ կարող է հասարակական տրամադրութեան վրայ իր ունեցած ազդեցութեամբ անախորժ հակահարուած առաջ բերել դէպի թատրոնական գործը, որ այնքան գնահատելի գոհողութիւնների, անհատական թէ հաւաքական գովելի եռանդի գեղեցիկ արդիւնք է:

Պիեսասների ընտրութիւնը երբեմն այն աստիճան անյաշող է, այնպիսի անփութութեան ապացոյց է տալիս, որ մարդ անկարող է լինում նոյնիսկ մեղմացուցիչ հանգամանքներ գտնել: Օրինակ՝ «Օտարուհին», «Թագնուած կայծերը», որոնք երկուսն էլ համարձակ կարող էին չը խաղացուել, և հասարակութիւնը ոչինչ չէր կորցնի, իսկ բեմը կը շահուէր:

Եւ յետոյ՝ դա ի՞նչ լեզու է, որ լսում է բեմից. թատրոնական կոմիտետը նայո՞ւմ է հարկ եղած ուշադրութեամբ իր քննութեանը յանձնուած երկերը՝ ինքնուրոյն թէ թարգմանական, ուղղել, սրբագրել տալի՞ս է արդեօք այդ բոլորը:

Եթէ այո՛, ապա ինչի՞ն պէտք է վերագրել այն արտասուելի «լեզուասպանութիւնը», որ կատարւում է հայոց բեմի վրայ: Ամբողջ աշխարհում բեմը հանդիսանում է այն դպրոցը, ուր մշակւում է լաւագոյն ոճը, լաւագոյն լեզուն, հայ բեմը մեզանում կարծես նրա համար է, որ առանց այն էլ հայերէնի խորթացած ականջները միշտ ըմբոստ պահի մայրենի լեզուի նրբութիւնների, գեղեցկութիւնների հանդէպ: Ժամանակ է հասկանալ, որ մեր շուրջը իշխող ողորմելի թոթովանքները, որոնք հայերէն են համարւում, լեզուական բարբարոսութիւնները, որոնք bon ton են նկատւում, ամօթալի, նոյնիսկ նողկալի դարձնելու համար, անհրաժեշտ է մայրենի լեզուի լաւագոյն ոճը հնչեցնել բեմից: Թատրոնական վարչութիւնն այս գործում խոշոր պարտք, խոշոր պատասխանատուութիւն ունի: Եթէ տեխնիկական անյետաձգելի, անհրաժեշտ գործերը արգելք են հանդիսանում նրանց հարկ եղած ուշադրութիւնը տալ պիեսասների ընտրութեան կամ լեզուի մշակութեան, մի՞թէ ճշմարիտ անկարելի է յատկապէս այդ գործի համար կողմնակի կարող անձանց աջակցութեանը դիմել:

Եւ մեր դերասանները...—խօսքս բոլորի մասին չէ ան-

շուշտ—երեւի եղել են օտարազգի թատրոններում, լսել են օտար դերասաններին, յիշում են արդեօք մեր բեմի վրայ իշխող լեզուական այս բարեկոնեան խառնակութեան հեռաւոր նմանութիւն ունեցող մի բան: Զայրոյթի և հեգնութեան առարկայ կը դառնայ մի ֆրանսիացի, գերմանացի կամ իտալացի արտիստ, որ առանց իր մայրենի լեզուն կատարելապէս տիրապետելու յանգճնի բեմ դուրս գալ: Հայ լեզու, քաջըշուած, տըրորուած, աղաւաղուած կամ արհամարհուած դրսում, փողոցում, առևտրականի խանութում, տներում, թող գոնէ նա մաքուր, անխառն մնայ բեմի վրայ: Չը գիտէ՞ք, չարչարուեցէք, սովորեցէք, ձեր աչքի առաջ, փառք Աստուծոյ, հայ լեզուի լաւնմուշը կայ յանձին տիկին Սիրանոյշի: Ինչո՞ւ իւրաքանչիւր մասնագիտութեան համար անհրաժեշտ է որոշ պատրաստութիւն, որոշ աշխատանք, միայն հայ բեմն է, որ կարելի է ոտք կոխել առանց ամենաանհրաժեշտ պայմանի—մայրենի լեզուի:

Վարչութիւնը և դերասանները հաստատ կարող են հաւատացած լինել, որ առանց լաւ հայերէնի նրանց աշխատանքը ամուլ կը մնայ:

Ա.

II Արաքսեանի թատրոնը Հաւլարարում

Նոյեմբերի 23-ին խաղացուեցին՝ առաւօտեան—Զիակոմետիի «Ոճրագործի ընտանիքը» դրաման, երեկոյեան—Դոննների «Մայրական սէր» մելօդրաման:

«Ոճրագործի ընտանիքը» պիեսի մէջ պ. Խարազեանը Կորրադօի գերը կատարելով՝ ապացուցեց վերջնականապէս, որ նրա մէջ ինքնուրոյն ոչինչ չը կայ, իսկ այն, ինչ փոխ է առել ուրիշներից, շնորհք չէ ունեցել քիչ թէ շատ կարգին իւրացնելու: Նա համարեա թէ դաճած դարձրեց իր տանջանքներով հսկայ Կորրադօին. նրա հարաւային տաք, առիւծի հոգին չէր փայլում պ. Խարազեանի խաղի մէջ. Կորրադօն մոնսիֆներէ հետ խօսելիս այնպէս կորովի ու կատաղի է, որ մոնսիֆները վախ է արտայայտում. սակայն այդ վախը դուրս եկաւ անտեղի, որովհետեւ բեմի Կորրադօի ձայնը չափազանց խեղճ էր:

Մոնսիֆների տիպը շատ գեղեցիկ կերպով վերարտադրեց պ. Վրոյրը. այդ գերը նրա ամպլուայի մէջ տեղ բռնող ամենաաջողակ դերերից մէկը պէտք է համարել:

«Մայրական սէր» մելօդրամայի գլխաւոր հերոսուհի տ.